30
ՕԳՈՍՏՈՍԻ
2019

Luys Լույս®

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՈԼՈՐՏՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....1

ԷՆԵՐԳԵՏԻԿ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ՄԱԿԱՐԴԱԿԸ....1

«ԳԱԶ՝ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԴԻՄԱՑ» ԾՐԱԳՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ....3

ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ՎՐԱ ՀԷԿ-ԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ....6

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԻՐԱՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՀԱՄԱՐ ՏԱՐԱՆՑԻԿ ԵՐԿԻՐ....7

ԻՐԱՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ....11

Ի՞ՆՉ ՍՊԱՍԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ....12

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ....14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2019թ. փետրվարի 27-28-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ Իրան կատարած այցից հետո հայկական լրատվական-փորձագիտական դաշտում նորից սկսեցին ակտիվորեն քննարկվել երկու երկրների միջև էներգետիկ ոլորտում համագործակցության հեռանկարները: Իրանի նախագահի և հոգևոր առաջնորդի, ինչպես նաև տեղի հայ համայնքի հետ հանդիպումների ժամանակ ՀՀ վարչապետը խոսեց էներգետիկ ոլորտում համագործակցությունը խորացնելու շուրջ ձեռք բերված քաղաքական պայմանավորվածությունների մասին: Սա, միանշանակ, իր ազդեցությունն ունեցավ հանրային սպասումների վրա, որոնք առանց այդ էլ մեծ էին՝ հաշվի առնելով գործող իշխանության կողմից Հայաստան-Իրան համագործակցության չիրացված ներուժի մասին նախկինում բազմիցս հնչած տեսակետները:

Այն, որ երկու հարևան երկրները ունեն համագործակցության մեծ ներուժ, իրականում կասկած չի հարուցում, սակայն այդ ներուժի ամբողջական իրացման օբյեկտիվ և սուբյեկտիվ խոչընդոտները նույնպես հարկավոր է հաշվի առնել: Ինչպես արտաքին քաղաքական մի շարք այլ ոլորտներում, այնպես էլ Իրանի հետ հարաբերություններում ավելորդ ու անիրատեսական սպասումներ ձևավորելը ի վերջո կարող է հանգեցնել հիասթափության, ինչը բացասաբար կազդի երկկողմ հարաբերությունների հետագա զարգացման վրա: Ինչ վերաբերում է էներգետիկ ոլորտում համագործակցության խորացմանը, ապա այս ուղղությամբ վերջին տասնամյակների ընթացքում բավականին մեծ աշխատանք է տարվել, որի արդյունքում, թեև դանդաղ տեմպերով, սակայն որոշակի դրական զարգացումներ եղել են:

Իրանի և Հայաստանի միջև էներգետիկ ոլորտում համագործակցության ներկայիս մակարդակը և հեռանկարները ուսումնասիրելիս հարկավոր է հիմնվել միայն փաստերի վրա և հաշվի առնել առկա խոչընդոտները:

ԷՆԵՐԳԵՏԻԿ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Էներգետիկ ոլորտում Հայաստանի և Իրանի միջև համագործակցությունը ակտիվացել է 2000-ականներից սկսած, և անցած տարիների ընթացքում այս ուղղությամբ որոշակի հաջողություններ են գրանցվել: Դեռևս 2005թ. երկու երկրների համագործակցության արդյունքում իրականացվեց Պուշկինի լեռնանցքում հողմաէլեկտրակայանների կառուցման ծրագիրը: 2000-ականներին համատեղ ջանքերով իրականացվեցին Հայաստան-Իրան բարձրավոլտ էլեկտրահաղորդման 1-ին և 2-րդ գծերի շինարարության ծրագրերը: 2007թ. տեղի ունեցավ Իրան-Հայաստան գազատարի առաջին հատվածի, իսկ 2008-ին՝ երկրորդի բացումը:

2016թ. իրականացվեց Իրանի հետ սահմանամերձ գյուղերի գազաֆիկացման ծրագիրը: Դեռևս 2006թ. մայիսին Իրանն ու Հայաստանը էներգահամակարգերի միջև էլեկտրաէներգիայի փոխանակման հզորություններն ավելացնելու նպատակով նոր երկշղթա էլեկտրահաղորդման գծի կառուցման վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր էին ստորագրել: Երկու երկրների միջև թվով երրորդ էլեկտրահաղորդման 400 կՎտ հզորությամբ գծի և համապատասխան ենթակայանի շինարարությունը ամբողջությամբ պետք է ֆինանսավորվեր իրանական կողմից: Սակայն երկար ժամանակ ծրագիրը գործնական շինարարության փուլ չէր մտնում՝ կապված միջազգային պատժամիջոցների պատճառով Իրանում առաջացած մի շարք խնդիրների հետ: Իրանի և 5 գերտերությունների միջև միջուկային պայմանագրի ստորագրումից հետո այս ուղղությամբ ջանքերը նորից ակտիվացան. 2015թ. օգոստոսին էլեկտրահաղորդման 3-րդ գծի շինարարական աշխատանքները վերսկսվեցին և դեռևս շարունակվում են՝ չնայած նախատեսված էր դրանք ավարտին հասցնել 2018-ին:

Ուշագրավ է, որ վարչապետ Փաշինյանը մայիսի 8-ի իր ասուլիսի ժամանակ հնչեցրած 100 ձեռքբերումների շարքում հայտարարել էր, որ «դեռևս 2006թ. մեկնարկած Հայաստան-Իրան 3-րդ էլեկրահաղորդման գծի շինարարական աշխատանքներին մեծ թափ են տվել, ինչի շնորհիվ 2018թ. վեց ամսվա արդյունքներով կատարվել են մոտավորապես նույն քանակի աշխատանքներ, ինչ նախորդ 12 տարվա ընթացքում»[1]: Ակնհայտ է, որ իրանական կողմի ներդրումների հաշվին ֆինանսավորվող այս ծրագրի իրականացումը հիմնականում կախված է այդ երկրի սոցիալ-տնտեսական խնդիրներից, որոնք արևմտյան աճող պատժամիջոցների պայմաններում ավելի են սրվել: Չնայած ՀՀ իշխանությունների լավատեսական պնդումներին՝ փորձագետների գնահատմամբ առայժմ կատարվել է էլեկրահաղորդման գծի շինարարական աշխատանքների ընդամենը մոտ 15-20%-ը[2]: Հուլիսին «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցի ժամանակ ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը հայտնեց, որ Իրան կատարած այցի և միջկառավարական հանձնաժողովի 16-րդ նիստի ընթացքում իրանական կողմի հետ պայմանավորվածություն են ձեռք բերել էլեկտրահաղորդման 3-րդ գծի շինարարությունը 18 ամսվա ընթացքում ավարտելու մասին[3]:

Էներգետիկ ոլորտում Իրանի և Հայաստանի միջև իրականացվող ամենահաջողված ծրագրերից մեկը «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագիրն է: Այս ծրագրի շրջանակներում Հայաստանը Իրանից տարեկան մոտ 300-400 մլն խորանարդ մետր գազ է ստանում՝ փոխարենը Իրանին մատակարարելով 1-1.2 մլրդ կՎտ/ժ էլեկտրաէներգիա՝ 1 խմ գազ/ 3 կՎտ/ժ էլեկտրաէներգիա փոխարժեքով: Իրանից ներմուծվող գազի այս ծավալը կազմում է Հայաստանի պահանջարկի մոտ 15%-ը (տարեկան սպառումը՝ մոտ 2 մլրդ խմ):

[1] https://www.primeminister.am/hy/interviews-and-press-conferences/item/2019/05/08/Nikol-Pashinyan-Press-Conference/
[2] https://finport.am/full_news.php?id=38913&lang=1
[3] https://www.youtube.com/watch?v=QOC9o0T5zOE

Հայաստան գազի հիմնական մատակարարը Ռուսաստանն է: Այդուհանդերձ, Իրանից գազի մատակարարման խողովակի առկայությունը ապահովում է Հայաստանի համար երաշխիք գազի անխափան մատակարարման համար՝ ռուսական խողովակի խափանման պարագայում: Ընդ որում, ունենալով այդ գազատարով ստացվող գազի դիմաց Իրան հոսանք մատակարարելու պայմանագիր, հայկական կողմը, փաստացիորեն, ապահովել է այդ այլընտրանքային կամ պահուստային գազամուղի ֆինանսական ինքնաբավության խնդիրը:

Իրան-Հայաստան գազատարի թողունակությունը իրականում շատ ավելի մեծ է: Դրանով հնարավոր է տարեկան 1.2 մլրդ խմ գազ մատակարարել Հայաստան, իսկ անհաժեշտ ներդրումների ներգրավմամբ գազատարի արդիականացման ու ճնշման ավելացման դեպքում ծավալը կարող է հասնել 2-2.3 մլրդ խմ: Այս ծավալը գրեթե համընկնում է Հայաստանում կապույտ վառելիքի սպառման տարեկան ծավալի հետ, ուստի անհրաժեշտության դեպքում իրանական գազը ոչ միայն կարող է դիվերսիֆիկացնել Հայաստանի գազի շուկան, այլև այստեղ գերակայող դիրք գրավել: Ստորև կանդրադառնանք նաև այս հարցում առկա վերապահումներին:

Հայաստանն ու Իրանը բանակցություններ են վարում էներգետիկ ոլորտում ևս մի քանի ծրագրերի իրականացման շուրջ: Այդպիսի ծրագրերից են՝ Արաքս գետի վրա ՀԷԿ-երի կառուցումը, Հայաստանի տարածքով իրանական գազի տարանցումը դեպի Վրաստան, իսկ հետագայում՝ նաև այլ շուկաներ, «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» պայմանագրի երկարաձգումը և ծավալների վերանայումը, Իրանից գազի ուղղակի գնումը, և այլն: Այս ծրագրերի իրականացումը պետք է նոր որակ հաղորդի էներգետիկ ոլորտում երկու երկրների համագործակցությանը, ուստի անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին:

«ԳԱԶ՝ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԴԻՄԱՑ» ԾՐԱԳՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հայաստան-Իրան էներգետիկ ծրագրերից ամենահաջողվածն ու հեռանկարայինը կարելի է համարել «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում, ինչպես նշվեց, Հայաստանը ոչ միայն արտահանում է երկրում արտադրվող էլեկտրաէներգիայի ավելցուկը, այլև ընդունելի պայմաններով Իրանից գազ ներկրմուծելու հնարավորություն է ստանում: Այս ոլորտում համագործակցությունն ունի զարգացման ներուժ, քանի որ Իրանի հյուսիսային շրջաններում տարեցտարի ավելանում է էլեկտրաէներգիայի պահանջարկը, իսկ Հայաստանը էլեկտրէներգիայի արտադրության ծավալներն ավելացնելու ընթացիկ ծրագրեր ունի:

Վերջին տարիներին «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագրի շրջանակներում Հայաստանը, ըստ տարբեր գնահատականների, տարեկան գրեթե 1.2 մլրդ կՎտ/ժ էլեկտրաէներգիա է արտահանում դեպի Իրան: Ամերիկյան export.gov կայքի 2019թ.

փետրվարի 12-ի հրապարակման համաձայն՝ 2017թ. Հայաստանից էլեկտրաէներգիայի արտահանումը կազմել է շուրջ 61 մլն ԱՄՆ դոլար:[4] ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հրապարակած վիճակագրության համաձայն՝ 2017թ. Հայաստանից արտահանվել է 1.397 մլրդ կՎտ/ժ էլեկտրաէներգիա, որից 1,224 մլրդ-ը՝ Իրան: Արտահանված էլեկտրաէներգիայի փոխարեն Իրանից Հայաստան է ներմուծվում տարեկան 350-400 մլն խմ գազ:

2018թ. Իրանից Հայաստան ներմուծվել է 567 մլն խմ գազ, որի դիմաց արտահանվել է 1 մլրդ 839 մլն կՎտ/ժ էլեկտրաէներգիա: Հատկանշական է, որ ըստ մաքսային ծառայության՝ 2018 թվականին Հայաստանն Իրան է արտահանել 110 մլն դոլարի ապրանք, որից շուրջ 92 մլն-ը (83.5%-ը)՝ էլեկտրաէներգիա: Այսինքն՝ եթե չհաշվենք «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագրով էլեկտրաէներգիայի արտահանումը, ապա նախորդ տարի Հայաստանը դեպի Իրան արտահանել է 20 մլն դոլարից էլ պակաս արժողությամբ ապրանքներ, մինչդեռ Իրանից ներմուծման կազմում գազի կշիռը 31% է՝ 85 մլն դոլար[5]:



[6]

Բազմիցս նշվել է, որ իրանական գազը ավելի թանկ է, քան ՌԴ-ից գնած գազը: Սա իր հարցազրույցներից մեկում հաստատել է նաև էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախկին նախարար Գարեգին Բաղրամյանը: Սակայն այստեղ պետք է հաշվի առնենք, որ գործ ունենք ոչ թե գազի ուղղակի գնման, այլ փոխանակման գործարքի հետ, ուստի նման պայմանները կարող ենք փոխշահավետ համարել:

Հատկանշական է, որ Իրանը, լինելով Հայաստանից էլեկտրաէներգիայի արտահանման գրեթե միակ խոշոր շուկան, կարողացել է իր համար ձեռնտու գին սահմանել Հայաստանից ներկրվող էլեկտրաէներգիայի համար: Հայաստանի կողմից

[4] https://www.export.gov/article?id=Armenia-energy-sector
[5] https://hetq.am/hy/article/102873
[6] https://hetq.am/hy/article/102873

էլեկտրաէներգիայի արտահանման շուկայի դիվերսիֆիկացիան թույլ կտա ավելի ձեռնտու պայմաններ թելադրել իրանական կողմի հետ հետագա բանակցությունների ընթացքում: Իսկ դիվերսիֆիկացիայի ամենահիրատեսական ուղղությունը կարող է լինել վրացական շուկան:

2018թ. ընթացքում Վրաստանը շուրջ 1.2 մլրդ կՎտ/ժ էլեկտրաէներգիա է ներմուծել Ադրբեջանից: Բացի այդ, Վրաստանում առաջիկա տարիների համար կանխատեսվում է էլեկտրաէներգիայի պահանջարկի տարեկան 4.6% աճ[7]: Թեև Վրաստանում նույնպես էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները ավելացնելու խոշորամասշտաբ ծրագրեր են կյանքի կոչվում, սակայն գոնե ներկայիս պայմաններում, համապատասխան ենթակառուցվածքներ ստեղծելով, Հայաստանը կարող է էականորեն ավելացնել էլեկտրաէներգիայի մատակարարումները դեպի այդ երկիր՝ դիվերսիֆիկացնելով իր էլեկտրաէներգիայի արտահանման շուկաները:

Իրանի հետ «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» ծրագրի զարգացման տեսանկյունից կարևոր նշանակություն կարող է ունենալ նաև Հայաստանից դեպի Իրան արտահանվող էլեկտրաէներգիայի ծավալների ավելացումը: Սակայն կարևոր է, որ Հայաստանը կարողանա նաև ավելացնել էլեկտրաէներգիայի արտադրությունը: 2018թ. Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրությունը կազմել է 7.8 մլրդ կՎտ/ժ, որից մոտ 6.2 մլրդ-ը՝ տեղական սպառումն է: Կապված Մեծամորի ատոմակայանի աշխատանքը պարբերաբար դադարեցնելու հետ՝ վերջին շրջանում Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրության որևէ շոշափելի աճ տեղի չի ունենում, ինչը կարող ենք տեսնել ստորև ներկայացված աղյուսակում:

ՀՀ-ում էլեկտրաէներգիայի արտադրությունը 2014-2018թթ. (մլն կՎտ/ժ)[8]					
	2014	2015	2016	2017	2018
Էլեկտրական էներգիայի արտադրանքը	**7750**	**7798**	**7315**	**7763**	**7777**
«ՀԱԷԿ» ՓԲԸ	2465	2788	2380	2620	2076
Ջերմային կայաններ	3262	2780	2564	2853	3360
Հիդրոկայաններ+ փոքր էլեկտրակայաններ	2023	2231	2371	2290	2340
Էլեկտրական էներգիայի ներհոսք	**206**	**174**	**264**	**281**	**148**
ԻԻՀ-ից	51	89	77	75	24
Արցախից	14	14	40	26	41
Վրաստանից	140	71	148	180	82
Էլեկտրական էներգիայի արտահոսք	**1265**	**1423**	**1220**	**1397**	**1573**
ԻԻՀ	1195	1253	1176	1224	1540
Արցախ	70	83	45	45	26
Վրաստան	0	87	0	127	8
Էլեկտրական Էներգիայի սպառումը ՀՀ ներքին շուկայում	**6142**	**6050**	**5915**	**5862**	**6160**

[7] http://bizzone.info/energy/2019/1548962589.php
[8] http://minenergy.am/page/396

Ըստ ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների՝ այս տարվա առաջին կիսամյակի ընթացքում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրությունը նվազել է 5,5%-ով[9]: Պատահական չէ, որ այս տարվա առաջին 4 ամիսների ընթացքում Հայաստանից Իրան արտահանումը նվազել է 44.5%-ով (կազմել է 179 մլն դոլար), մինչդեռ, ինչպես նշեցինք, արտահանման կառուցվածքում գերակշռող մասը կազմում է էլեկտրաէներգիան:

Այս առումով կարևոր է ատոմակայանի գործունեությունը երկարացնելու նպատակով վերջինիս արդիականացման ընթացող ծրագիրը: Մյուս կողմից՝ Հայաստանի՝ որպես էլեկտրաէներգիա արտահանող երկրի ճակատագիրը առաջիկա տասնամյակներին կախված կլինի այն հանգամանքից, թե նոր ատոմակայան կառուցելու համար արդյոք հնարավո՞ր կլինի անհրաժեշտ ներդրումներ ապահովել, և այս հարցում ի՞նչ դիրքորոշում կորդեգրի ներկայիս կառավարությունը: Իհարկե, նոր ՋԷԿ-ի, վերականգնվող էլեկտրաէներգիայի արտադրության զարգացումը՝ արևային և հողմային էլեկտրակայանների կառուցումը, Դեբեդ և Արաքս գետերի վրա նոր հիդրոէլեկտրակայանների շինարարությունը նույնպես դրական ազդեցություն կարող են ունենալ էլեկտրաէներգիայի տարածաշրջանային շուկայում Հայաստանի դիրքերի ամրապնդման տեսանկյունից:

ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ՎՐԱ ՀԷԿ-ԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայանների կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորման (ՏՏՀ) աշխատանքները կատարել է իրանական «Մահաբ-Ղոդս» խորհրդատվական ընկերությունը՝ Իրանի ջրային և էներգետիկ զարգացման ընկերության պատվերով: Ըստ 2008թ. հաստատված ՏՏՀ-ի՝ Արաքս գետի վրա նախատեսվում էր կառուցել երկու ՀԷԿ, Մեղրիի ՀԷԿ-ը՝ հայկական կողմում, և Ղարաչիլարի ՀԷԿ-ը՝ իրանական կողմում: Մեղրիի ՀԷԿ-ի տարեկան արտադրությունը պետք է կազմի մոտ 800 մլն կՎտ/ժ:

Մեղրիի ՀԷԿ-ի կառուցման շուրջ խոսակցությունները ակտիվանում են հատկապես Հայաստանի և Իրանի ղեկավարների փոխայցելությունների շրջանում, ու թեև այս ծրագրի իրականացումը կարող է փոխշահավետ լինել երկու կողմերի համար էլ, դրա գործնական իրականացումը անընդհատ ձգձգվում է: Այսօր Մեղրիում ՀԷԿ-ի կառուցումը

[9] https://www.armstat.am/file/doc/99514348.pdf

գնահատվում է շուրջ 300 մլն ԱՄՆ դոլար, սակայն Թեհրանն ու Երևանը դեռևս չեն կարողանում ծրագրի իրականացման համար հմապատասխան ներդրումներ ապահովել: Իրանում վերջին շրջանում խորացող տնտսական խնդիրները, իրանական արժույթի արժեզրկումը սահմանափակում են այդ երկրի կողմից արտաքին ներդրումներ կատարելու հնարավորությունները, սակայն կողմերը շահագրգռված են ֆինանսավորման այլ աղբյուրներ գտնելու հարցում:

Փոխվարչապետ Միեր Գրիգորյանը Հայաստան-Իրան միջկառավարական հանձնաժողովի 16-րդ նիստից հետո հայտարարեց, որ Մեղրիի ՀԷԿ-ի շուրջ բանակցություններում որոշակի հստակություն է ձեռք բերվել: Մասնավորապես նա նշեց, որ պայմանավորվածություն է ձեռք բերվել, ըստ որի Մեղրիի ՀԷԿ-ի կառուցումից հետո արտադրվող էլեկտրաէներգիան գնելու է իրանական կողմը՝ 10-15 տարվա ընթացքում, թեև չնշեց ՀԷԿ-ի շինարարության կոնկրետ ժամկետները:

Մեղրիի ՀԷԿ-ի, ինչպես նաև Դեբեդ գետի վրա Շնողի ՀԷԿ-ի կառուցումը (որը ըստ նախնական հաշվարկների տարեկան շուրջ 200 մլն կՎտ/ժ էլեկտրաէներգիա կարտադրի) հնարավորություն կտան գրեթե կրկնապատկել Հայաստանից Իրան արտահանվող էլեկտրաէներգիայի ծավալը: Սա թույլ կտա ավելացնել «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» պայմանագրով Իրանից Հայաստան մատակարարվող գազի քանակը՝ դրա տարեկան ծավալը հասցնելով ընդհուպ մինչև 1 մլրդ խմ-ի: Նման պարագայում Հայաստանում սպառվող գազի շուրջ 40%-ը կներկրվի Իրանից, ինչը կարևոր ցուցանիշ է Հայաստանի էներգետիկ անվտանգության տեսանկյունից:

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԻՐԱՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՀԱՄԱՐ ՏԱՐԱՆՑԻԿ ԵՐԿԻՐ

Վարչապետ Փաշինյանի՝ Իրան կատարած այցից հետո փորձագիտական շրջանակներում հատկապես լայն քննարկման առարկա դարձավ Հայաստանի տարածքով իրանական գազը Վրաստան տեղափոխելու ծրագիրը: Թե՛ Փաշինյանը, թե՛ ԻԻՀ նախագահ Ռոհանին խոսեցին այս ուղղությամբ քաղաքական կամքի առկայության մասին: Ծրագիրը նոր չէ, ՀՀ նախորդ իշխանությունները նույնպես բազմիցս հայտարարել են այն կյանքի կոչելու մտադրության մասին: Տարբեր վերլուծաբաններ և լրատվամիջոցներ փորձեցին ավելի հեռուն գնալ՝ նախանշելով նաև իրանական գազը Հայաստանի ու Վրաստանի տարածքով եվրոպական շուկա արտահանելու հեռանկարները:

Նախ փորձենք հասկանալ, թե որքանով է իրատեսական իրանական գազի արտահանումը Վրաստան՝ Հայաստանի տարածքով: Գաղտնիք չէ, որ Վրաստանը գազի ներմուծման առումով վերջին տարիներին գրեթե ամբողջությամբ հայտնվել է Ադրբեջանից կախվածության մեջ, ուստի բնական է, որ Թբիլիսին կցանկանա դիվերսիֆիկացնել գազի ներկրման ուղղությունները: Վրացական փորձագիտական շրջանակների պնդմամբ

վերջերս Ադրբեջանը թանկացրել է Վրաստան մատակարարվող գազի գինը, ինչը կարող է այլ մատակարարներ որոնելու հարցում Թբիլիսիի համար լրացուցիչ խթան հանդիսանալ:

Ներկայումս Վրաստանը տարեկան սպառում է մոտ 2.5 մլրդ խմ գազ: Բաց աղբյուրներում Ադրբեջանից Վրաստանին մատակարարվող գազի գնի մասին հստակ տվյալներ չկարողացանք գտնել, սակայն Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված տվյալների համաձայն՝ 2019թ. հունվար-հունիս ամիսներին Ադրբեջանից ներմուծել է շուրջ 986 մլն խմ գազ՝ մոտ 165 մլն դոլար արժողությամբ: Ըստ այդ տվյալների համադրության՝ ստացվում է, որ Ադրբեջանը Վրաստանին 1000 խմ գազը վաճառել է մոտ 167 դոլարով[10]: Ադրբեջանական ՍՕԿԱՌ ընկերության հրապարակած տվյալների համաձայն՝ 2018թ. Ադրբեջանը Վրաստան է արտահանել շուրջ 2.2 մլրդ խմ գազ[11], որը ներառում է նաև տարանցման դիմաց Վրաստանին մատակարարվող գազը: Վրաստանի պետական վիճակագրական ծառայության տվյալների համաձայն՝ նույն ժամանակահատվածում Ադրբեջանից ներմուծված գազի արժեքը կազմել է շուրջ 267 մլն ԱՄՆ դոլար[12]: Ըստ Գազպրոմի հետ կնքված՝ Ռուսաստանից Հայաստան գազի տարանցման պայմանագրի, Վրաստանը կարող է ռուսական գազը գնել 1000 խմ-ը 185 դոլար արժեքով[13]:

Վրաստանը գրեթե ամբողջությամբ դադարեցրել է Ռուսական գազի ներմուծումը, Մինչև 2017թ. Թբիլիսին Գազպրոմից ստանում էր Հայաստան ներմուծվող գազի 10%-ը, այսինքն տարեկան շուրջ 200 մլն խմ, սակայն Գազպրոմի և Վրաստանի կառավարության միջև կնքված նոր պայմանագրի համաձայն՝ այժմ Գազպրոմը տարանցման համար փոխհատուցում է արժույթով: Այս փոփոխությունը նաև Հայաստանի նախկին իշխանությունների ջանքերի արդյունքն է, քանի որ այն բխում է հայկական կողմի շահերից. մինչ այդ տարանցման համար Վրաստանին տրվող շուրջ 200 մլն խմ գազի արժեքը կազմում էր մոտ 40 մլն դոլար, մինչդեռ փորձագետների գնահատմամբ նոր պայմանագրի շնորհիվ Վրաստանին տարանցման համար վճարվում է տարեկան 10 մլն դոլարից մի փոքր ավելի[14] [15]:

Տարեկան մոտ 300-350 մլն խմ գազ Վրաստանը ստանում է Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի տարանցման համար (տարանցվող գազի 5 տոկոսը): Փաստորեն, այսպես թե այնպես, այժմ Վրաստանը ամբողջությամբ կախված է ադրբեջանական գազի ներմուծումից, հետևաբար Բաքվից էներգետիկ կախվածությունը թուլացնելու համար Վրաստանը պետք է որոշակի քայլեր ձեռնարկի:

---

[10] https://report.az/en/energy/georgia-posts-more-than-7-growth-in-gas-import-from-azerbaijan/
[11] http://interfax.az/view/755799
[12] http://bizzone.info/energy/2019/1548197614.php
[13] https://www.kommersant.ru/doc/3908681
[14] https://www.ekhokavkaza.com/a/29779283.html
[15] https://ru.armeniasputnik.am/economy/20190214/17285479/V-Gruzii-skandal-iz-za-tranzita-rossiyskogo-gaza-v-Armeniyu-Erevan-mozhet-pomoch-Tbilisi.html

2019թ. փետրվարին Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարար Գեորգի Կաբուլիան հայտարարել էր, որ Գազպրոմի հետ բանակցություններ են վարվում, և հավանաբար արդեն այս տարի կսկսեն ռուսական գազ գնել: Նա նաև նշում էր, որ բանակցությունների նպատակն է ինչպես Հայաստան մատակարարվող գազի տրանզիտի, այնպես էլ գազի վաճառքի պայմանների բարելավումը[16]: Ինչպես նշվեց, Վրաստանը նաև բանակցություններ է վարում իրանական և հայկական կողմերի հետ՝ իրանական գազի ձեռքբերման նպատակով:

Թեև տեսականորեն հնարավոր է դեպի Վրաստան ՀՀ տարածքով իրանական գազի տարանցումը, քանի որ Իրան-Հայաստան գազատարը այժմ օգտագործվում է իր հնարավորությունների միայն 30-40 տոկոսով, սակայն փորձագետները ավելի հավանական են համարում դեպի Վրաստան իրանական գազի անուղղակի մատակարարումը: Հայաստանի տարածքով իրանական գազի ուղակի տարանցման կազմակերպումը կապված է մեծ ծախսերի հետ, այն տեխնիկապես այնքան էլ դյուրին չէ և պահանջում է մեծածավալ ներդրումներ: Մարտի 7-ին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի նախկին պաշտոնակատար Գարեգին Բաղրամյանը «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում նշում էր, որ համապատասխան փոխհամաձայնությունից հետո Հայաստանը կստանա Վրաստանի համար նախատեսված իրանական գազը, իսկ Վրաստանին կմնա Հայաստան առաքվող նույն ծավալի ռուսական գազը: Սակայն այստեղ ամենաէական հանգամանքը կարող է լինել ռուսական և իրանական կողմից առաջարկվող գազի գինը, ինչպես նաև Ռուսաստանի համար իր գազը Վրաստանին միջնորդավորված վաճառելու նպատակահարմարության հարցը:

Հայտնի է, որ ՌԴ-ն Հայաստանին գազը մատակարարում է արտոնյալ գնով: Մարտի 11-ին հանրային հեռուստաընկերության «Լուրեր 60 րոպե» հաղորդման շրջանակներում տված հարցազրույցի ժամանակ Իրանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արտաշես Թումանյանը հաստատեց, որ Իրանը երբեք Հայաստանին գազի ավելի էժան գին չի առաջարկել, քան ռուսական կողմի առաջարկած գինն է: Ավելին, դեսպանը նաև նշեց, որ Իրանը ապագայում էլ հազիվ թե ավելի էժան գին առաջարկի, քանի որ Թեհրանը հարևան երկրներին գազը վաճառում է միջազգային գներով: Նման պարագայում շատ կարևոր է, թե իրանական կողմի հետ հետագա հանդիպումների ժամանակ գազի գնի և դրա մատակարարման վերաբերյալ հարցերի քննարկումները ինչպիսի արդյունք կտան:

Չպետք է մոռանալ նաև, որ առաջիկա տարիներին Ադրբեջանը նախատեսում է կտրուկ ավելացնել Վրաստանի տարածքով Թուրքիա տարանցվող գազի ծավալները: Թուրքիայի էներգետիկ շուկայի կարգավորման խորհրդի հրապարակած տվյալների համաձայն՝ 2018թ. Ադրբեջանից Թուրքիա մատակարարվող գազի ծավալը կազմել է շուրջ 7.5 մլրդ խմ: Արդեն իսկ 2019թ. առաջին 6 ամիսների ընթացքում նախորդ տարվա նույն

[16] http://zerkalo.az/azerbajdzhan-ne-povyshal-stoimost-gaza-dlya-gruzii/

ժամանակահատվածի համեմատ Ադրբեջանը բնական գազի արտահանման ծավալները ավելացրել է 83% ով[17]: Ադրբեջանական «Շահ Դենիզ-2» ծրագրի և ՏԱՆԱՊ գազատարի շահագործման մեկնարկի արդյունքում նախատեսվում է, որ մինչև 2021թ. Ադրբեջանից Թուրքիա տարեկան մատակարարվող գազի ծավալները կավելանան ևս 6 մլն խմ-ով: Ավելի ուշ, Հարավային գազային միջանցքի ամբողջական գործարկման արդյունքում Ադրբեջանը Վրաստանի և Թուրքիայի տարածքով ևս 10 մլրդ խմ գազ պետք է արտահանի Եվրոպա:

Սա նշանակում է, որ առաջիկա տարիներին միայն տարանցման դիմաց Ադրբեջանից Վրաստան ստացվող գազի տարեկան ծավալները կարող են ավելանալ մոտ 800 մլն խմ-ով: Հետևաբար, Իրանի կողմից միայն մրցունակ գին առաջարկվելու դեպքում հնարավոր կլինի կյանքի կոչել Հայաստանի տարածքով դեպի Վրաստան իրանական գազի տարանցման ծրագիրը: Այլապես, եթե նույնիսկ Ադրբեջանից էներգետիկ կախվածությունը թուլացնելու նպատակով Վրաստանը սկսի իրանական կամ ռուսական գազ ներկրել, ապա դրանց ծավալները կարող են ուղղակի սիմվոլիկ լինել, ուստի Հայաստանի՝ որպես տարանցիկ երկրի շահը չափազանց աննշան կլինի: Հավանական է նաև Ադրբեջանի կողմից այդ հնարավորության դեմ արդյունավետ աշխատանքը, որի արդյունքում Վրաստանը ստիպված կլինի հրաժարվել Հայաստանից տարանցված՝ նույնիսկ փոքր-ինչ էժան իրանական գազից՝ հիմնական մատակարար Ադրբեջանի կողմից անխափան մատակարարում ապահովելու նպատակով:

Կարևոր է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ Վրաստանը, լինելով ադրբեջանական էներգետիկ պաշարների տարանցման ամենակարևոր օղակներից մեկը, ունի Ադրբեջանի էներգետիկ քաղաքականության վրա ազդեցության մեծ լծակներ, ուստի Ադրբեջանից Վրաստանի էներգետիկ կախվածությունը հարաբերական է: Ավելի շուտ՝ երկու երկրների միջև առկա է փոխկախվածություն, ինչը Բաքվին հնարավորություն չի տալիս Վրաստան մատակարարվող գազի գնագոյացման հարցում կամայական վարքագիծ դրսևորել:

Վերջին շրջանում Իրանը կորցրել է գազի արտահանման մի շարք շուկաներ, այդ թվում զգալիորեն նվազել է արտահանումը դեպի Թուրքիա և Իրաք: Իրավիճակը ավելի է բարդացել ԱՄՆ-ի կողմից Իրանի նկատմամբ «Առավելագույն ճնշում» (Maximum pressure) քաղաքականության պատճառով, որի արդյունքում Վաշինգտոնը այս տարվա մայիսին չեղարկեց իրանական էներգակիրների ներմուծման բացառությունը որոշ երկրների համար: Այս համատեքստում Թեհրանը շահագրգռված է գազի արտահանման նոր շուկաների որոնման հարցում, մանավանդ որ վերջին տարիներին այդ երկրում ավելացել են նաև գազի արդյունահանման ծավալները: Այս հանգամանքները հույս են ներշնչում, որ Իրանը, ամեն դեպքում, առաջիկայում գազի ավելի մրցունակ գին կառաջարկի:

[17] https://report.az/ru/energetika/azerbaydzhan-narastil-eksport-gaza-na-83/

Ինչ վերաբերում է Հայաստանի և Վրաստանի տարածքով իրանական գազը այլ երկրներ, մասնավորապես՝ Եվրոպական շուկա արտահանելու հարցին, ապա այս ծրագիրը վաղուց է շրջանառության մեջ մտել, սակայն համարվում է պակաս իրատեսական: Իրանական գազը Հայաստանի և Վրաստանի տարածքով Եվրոպա արտահանելու համար հարկավոր կլինի նոր գազատար կառուցել, այդ թվում անհասկանալի է, թե ինչ ճանապարհով է Վրաստանից իրանական գազը հասնելու Եվրոպա: Եթե խոսքը Սև ծովով խողովակաշարի անցկացման մասին է, ապա այն չափազանց թանկարժեք մտահաղացում է, հատկապես որ Թուրքիայի տարածքով գազատարի անցկացման կամ Ադրբեջանի նախաձեռնած Հարավային գազային միջանցքին միանալու միջոցով Իրանը ավելի իրատասական և համեմատաբար էժան տարբերակներ կարող է դիտարկել:

Մյուս տարբերակը, որի մասին խոսվում է, դա Հայաստան, Վրաստան, այնուհետև ՌԴ տարածքով դեպի Եվրոպա իրանական գազի տարանցման հնարավորությունն է: Սա ավելի անիրատեսական է թվում, եթե հաշվի առնենք գազի շուկայում ՌԴ և Իրանի մրցակցային դիրքերը, ինչպես նաև մի շարք խոչընդոտող աշխարհաքաղաքական հանգամանքներ: Արդյունքում կարող ենք եզրակացնել, որ իրանական գազի տարանցման տեսակետից թեև Հայաստանը որոշակի հնարավորություններ ունի, սակայն նման ծրագրերը, հատկապես կարճաժամկետ հեռանկարում, քիչ իրատեսական են:

ԻՐԱՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ինչպես նշվեց, Իրանը Հայաստան արտահանվող գազի համար դեռևս չի կարողացել Գազպրոմի առաջարկած գնի համեմատ ավելի մրցունակ առաջարկով հանդես գալ, ուստի այն տեսակետը, թե Իրանից գազի ուղղակի ներմուծման խոչընդոտող կողմը Գազպրոմն է, քննադատության չի դիմանում: Ուշագրավ է, որ ՀՀ նախկին իշխանությունները պարբերաբար ընդդիմադիր ուժերի կողմից մեղադրվում էին քաղաքական կամքի բացակայության մեջ, որի արդյունքում վերջիններս իբր ռուսական կողմի ճնշման ներքո չէին կարողանում Իրանից գազ գնել: Այժմ արդեն վարչապետ Փաշինյանի՝ Իրանում գազի գնի վերաբերյալ կատարած ակնարկից կարող ենք համոզվել, որ պատճառը ոչ թե քաղաքական կամքի բացակայությունն է, այլ իրանական կողմից առաջարկվող անընդունելի գինը:

Հայաստանում գազի մատակարարման ցանցը, այդ թվում Իրան-Հայաստան գազատարը գտնվում է Գազպրոմի ենթակայության տակ: Այսինքն՝ Իրանից Հայաստան մատակարարվող գազի գնագոյացման վրա Գազպրոմը կարող է ունենալ ազդեցություն, և եթե սահմանին առաջարկվող գինը ռուսական կողմի առաջարկած գնից թանկ է լինելու, ապա սպառողին իրանական գազը հասնելու է ավելի թանկ, քան այժմ ռուսական գազն է վաճառվում: Հետևաբար, կարող ենք եզրակացնել, որ իրանական գազի ներկայիս գնի պահպանման պարագայում, դրա ուղղակի վաճառքը Հայաստանին նույնպես պատկանում է դժվար իրագործելի և տնտեսական առումով չարդարացված ծրագրերի շարքին:

Ուշագրավ է, որ հուլիսին հայ-իրանական հերթական բանակցություններից հետո հայտարարվեց, որ պայմանավորվածություն է ձեռք բերվել իրանական գազը հայկական ապրանքների հետ փոխանակելու միջոցով ավելացնելու մատակարարման ծավալները, սակայն այս պայմանավորվածության մասին այլ մանրամասներ հայտնի չեն:

Ի՞ՆՉ ՍՊԱՍԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Ինչպես տեսանք, էներգետիկ ոլորտում Հայաստան-Իրան համագործակցության օրակարգում կան մի շարք ինչպես իրատեսական, այնպես էլ դժվար իրագործելի ծրագրեր: Վարչապետ Փաշինյանի Իրան կատարած այցից հետո ի հայտ եկան որոշ ուռճացված սպասումներ: Սրա կողքին պետք է նշենք, որ կարևոր է ապահովել դեռևս նախորդ իշխանությունների օրոք ձեռք բերված գործնական ծրագրերի շարունակականությունը, և այս առումով որոշ դրական ազդակներ նկատվում են:

Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի նախկին պաշտոնակատար Գարեգին Բաղրամյանը «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում նշել է նաև, որ բանակցություններ են ընթանում 2026 թվականին ավարտվող «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» պայմանագիրը մինչև 2040 թվականը երկարաձգելու շուրջ, և առաջիկայում իրանական կողմին կներկայացվի նոր պայմանագրի նախագիծը: Նա նաև նշել է, որ այս պայմանագրի շրջանակներում հնարավոր է զգալիորեն ավելացնել Իրանից ներկրվող գազի ծավալները և այն ուղղել վրացական շուկա: Այդուհանդերձ, կարևոր է աշխատել ստացվող գազի դիմաց մատակարարվող էլեկտրաէներգիայի ծավալի հաշվառման գործակիցը վերանայելու ուղղությամբ:

Եթե Իրանի հետ հետագա բանակցությունների արդյունքում Հայաստանը կարողանա հաջողության հասնել «Գազ՝ էլեկտրաէներգիայի դիմաց» պայմանագրի պայմանների բարելավման, ինչպես նաև իրանական գազի գնի նվազեցման հարցում, ապա Իրանից ներմուծվող գազի ծավալների որոշակի ավելացումը իրատեսական կլինի: 2018թ., ինչպես նշվեց, Հայաստանը Իրանից ներկրել էր ավելի քան 500 մլն խմ գազ, մինչդեռ Գազպրոմի հրապարակած տվյալների համաձայն՝ նախորդ տարի Հայաստան է մատակարարվել 1.94 մլրդ խմ ռուսական գազ[18]: Այսինքն՝ Հայաստանը իր գազի պահանջարկի գրեթե 20%-ը ապահովել է իրանական գազի հաշվին:

Ընդհանուր առմամբ կարող ենք եզրակացնել, որ էներգետիկ ոլորտում հայ-իրանական հարաբերությունները՝ ինչպես երկկողմ, այնպես էլ տարածաշրջանային մակարդակում, ունեն զարգանալու լուրջ հեռանկարներ սակայն դրանց առաջընթացը հարկավոր է իրականացնել հետևողական քայլերի միջոցով՝ չկապելով այն Հայաստանում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունների հետ: Այստեղ կարևոր է, թե՛ Իրանի, թե՛

[18] https://www.finam.ru/analysis/newsitem/gazprom-raskryl-strukturu-eksporta-gaza-v-2018-godu-20190214-185646

ՌԴ-ի կողմից էներգետիկ փոխգործակցության հարցում դրսևորած բարի կամքը, որը ոչինչ չի տա հայկական կողմի ադեկվատ արձագանքի բացակայության դեպքում:

Լինելով տարածաշրջանում Հայաստանի ամենահուսալի գործընկերները՝ Իրանն ու Ռուսաստանը բազմիցս աչքի են ընկել իրենց տարածաշրջանային մտածողությամբ և բարիդրացիությամբ: Հետևաբար, այս երկու երկրների հետ հարաբերությունները արտաքին ուժերի ազդեցությունից հնարավորինս զերծ պահելը պետք է լինի Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը: Այս հանգամանքը պետք է հաշվի առնել Իրանի շուրջ վերջին շրջանում ստեղծված ճգնաժամի պայմաններում Հայաստանի ռազմավարական գերակայությունները սահմանելիս՝ այդ թվում ճգնաժամի այս կամ այն սցենարի պարագայում Հայաստանի համար ի հայտ եկող ռիսկերը հաշվարկելիս:

Հայաստան-Իրան էներգետիկ համագործակցության խորացումը փոխշահավետ գործընթաց է, որը ՀՀ ցանկացած իշխանություն պետք է պատշաճ ձևով առաջ տանի և ապահովի օրակարգում առկա ծրագրերի իրականացման շարունակականությունը: Սա այն ոլորտն է, որտեղ միայն քաղաքական կամքի առկայությունը բավարար չէ, և հաջողություններ գրանցելու համար պահանջվում է դիվանագիտական, բանակցային հսկայական աշխատանք:

Հեղինակներ՝ Արմեն Աշոտյան
Դերենիկ Խաչատրյան

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. https://www.export.gov/article?id=Armenia-energy-sector
2. http://bizzone.info/energy/2019/1548962589.php
3. http://zerkalo.az/azerbajdzhan-ne-povyshal-stoimost-gaza-dlya-gruzii/
4. https://www.finam.ru/analysis/newsitem/gazprom-raskryl-strukturu-eksporta-gaza-v-2018-godu-20190214-185646
5. http://www.minenergy.am/page/464
6. http://www.cisstat.com
7. https://neftegaz.ru/en/news/view/180271-Azerbaijan-is-3rd-largest-gas-supplier-of-Turkey
8. https://www.eia.gov/beta/international/analysis.php?iso=IRN
9. http://www.energyofturkey.com/turkey-energy-news/turkey-hits-record-gas-consumption-and-imports-in-2017/
10. http://interfax.az/view/755799
11. https://www.youtube.com/watch?v=smVtTV5UIDY
12. http://interfax.az/view/757866
13. http://vzglyad.az/news/131683/Азербайджан-и-Иран-обсудили-создание-энергетического-коридора-между-этими-странами-и-Турцией-.html
14. https://polpred.com/?ns=1&ns_id=2910300
15. https://regnum.ru/news/2582737.html
16. https://azertag.az/ru/xeber/V_proshlom_godu_v_Azerbaidzhane_bylo_dobyto_387_milliona_tonn_nefti_i_192_milliarda_kubometrov_gaza-1236207
17. https://sputnik-georgia.ru/caucasus/20190228/244555231/Iran-gotov-postavlyat-gaz-v-Gruziyu.html
18. https://rusmonitor.com/iran-sobiraetsya-ehksportirovat-gaz-v-evropu.html
19. http://www.irna.ir/ru/News/3673385
20. http://bizzone.info/energy/2019/1548962589.php
21. https://sputnik-georgia.ru/radio/20190204/244190876/Mirtskhulava-v-Gruzii-defitsit-elektroenergii.html
22. https://rueconomics.ru/372635-rossiya-iran-i-azerbaidzhan-vernutsya-k-energeticheskomu-koridoru-sever-yug
23. https://regnum.ru/news/2584168.html
24. https://regnum.ru/news/2582357.html
25. https://168.am/2019/03/02/1089173.html
26. https://www.aravot.am/2019/03/06/1025968
27. https://iravunk.com/news/78278
28. https://artsakhpress.am/arm/news/24068/hay-iranakan-elektrahaxordman-3-rd-gtsi-karucman-hamar-iranakan-koxmy-ktramadri-1079-mln-evro-gumar.html
29. https://www.azatutyun.am/a/29808622.html
30. http://www.1tv.am/hy/video/Հարցազրույց-Արտաշես-Թումանյանի-հետ/119068
31. https://esco.ge/en/energobalansi/by-year-1/2018-energy-balance
32. https://esco.ge/en/energobalansi/by-year-1/2018-energy-balance
33. https://oilcapital.ru/news/export/01-03-2019/pochti-na-15-uvelichil-azerbaydzhan-eksport-gaza-v-turtsiyu-v-2018-godu
34. http://mitk.am/2019/02/հայաստանում-իրանական-կապիտալի-մասնա/

35. http://www.primeminister.am/hy/press-release/item/2019/02/27/Nikol-Pashinyan-meets-with-Armenian-community/
36. http://www.primeminister.am/hy/press-release/item/2019/02/27/Nikol-Pashinyan-meeting-with-Ali-Khamenei/
37. http://www.primeminister.am/hy/press-release/item/2019/02/27/Nikol-Pashinyan-Hassan-Rouhani-Joint-Statement/
38. https://www.civilnet.am/news/2019/02/28/Հայաստանը-պատրաստ-է-ավելացնել-գազի-ներկրումն-Իրանից-և-լինել-գազի-տարանցիկ-երկիր/355562/
39. https://eadaily.com/ru/news/2019/03/02/armeniya-iran-nesbyvshiesya-proekty-i-realnye-perspektivy
40. https://report.az/ru/energetika/azerbajdzhan-eksportiroval-7-9-mlrd-kubometrov-prirodnogo-gaza-v-2018-g

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*